ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «15» 04 2025 թ. N 1096 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N 629-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետը՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի փետրվարի 19-ի «Ներդրումների և արտահանման խթանման ծրագրի 2025 թվականի միջոցառումները հաստատելու մասին» N629-Ա հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Հրամանի նախաբանում «2025» թիվը փոխարինել «2024» թվով:
2) Հրամանի 1-ին կետի 4-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ ենթակետ՝

«5) 2025 թվականին օտարերկրյա պետությունում և Հայաստանում գործարար համաժողովների (ֆորումների), շնորհանդեսների, ինչպես նաև համանման միջոցառումների ցանկը՝ համաձայն N5 հավելվածի:»,

3) Հրամանի N 1 հավելվածի 7-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝

«7. Օտարերկրյա պետությունում միջազգային ցուցահանդեսներին ազգային տաղավարով մասնակցությունը կազմակերպվում է, եթե մասնակից ընկերությունների թիվն առնվազն 10-ն է, բացառությամբ սույն հրամանի N 3 հավելվածի 15-րդ կետով սահմանված դեպքի և իրականացվում է հետևյալ սկզբունքով. ցուցահանդեսային տարածքի վարձակալության (80%), տաղավարի դիզայնի, կառուցապատման, ազգային տաղավարի բրենդի գեղարվեստական, տեսալսողական, մուլտիմեդիա ձևավորման, տաղավարի համար անհրաժեշտ սարքավորումների վարձակալության (մուլտիմեդիա սարքավորումներ, կահույք, տեղեկատվական կրպակ, գովազդային վահանակներ), միջազգային ցուցահանդեսի կատալոգում ցուցադրողների մասին տեղեկատվության տեղադրման, կոմունալ ծախսերի, միջազգային ցուցահանդեսի կազմակերպչի կողմից ցուցադրողների գրանցման և պարտադիր այլ վճարների, միջազգային ցուցահանդեսին մասնակցության նպատակով տպագիր նյութերի հրատարակման ծախսերի ֆինանսավորումն ամբողջությամբ իրականացվում է ծրագրին հատկացված պետական բյուջեի միջոցների հաշվին:

4) Հրամանի N 1 հավելվածի 7-րդ կետից հետո լրացնել նոր 7.1-ին, 7.2-րդ և 7.3-րդ կետեր՝ հետևյալ բովանդակությամբ՝

«7.1. Օտարերկրյա պետությունում միջազգային ցուցահանդեսին ազգային տաղավարով տարածքի վարձակալության (գրանցման և մասնակցության) պայմանագրով նախատեսված ընդհանուր ծախսերի և կազմակերպչի կողմից այլ պարտադիր վճարների 20%-ը պարտավոր է կատարել ցուցահանդեսի յուրաքանչյուր մասնակից իր մասնաբաժնի չափով՝ արտարժույթին համապատասխան միջազգային ցուցահանդես կազմակերպող ընկերությանը՝ ուղիղ փոխանցմամբ: Վճարումը հավաստող անդորրագիրը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն 2 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով կամ առձեռն ներկայացնելուց հետո ծախսերի 80% ֆինանսավորումը կիրականացվի 1165 Ներդրումների և արտահանման խթանման՝ «11002. Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումներ» ծրագրին հատկացված պետական բյուջեի միջոցների հաշվին:

7.2. Օտարերկրյա պետությունում միջազգային ցուցահանդեսներին միասնական ազգային տաղավարում ցուցադրվող արտադրանքի բեռնափոխադրման ծախսերը հոգում է մասնակից ընկերությունը՝ իր ֆինանսական միջոցների հաշվին:

7.3. Ընդհանուր առմամբ, միջոցառման շրջանակներում ակնկալվում է աջակցել շահառուներին՝ առնվազն 14 ցուցահանդեսի մասնակցելու նպատակով:»:

5) Հրամանի N 1 հավելվածի 11-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝

«11. Սույն ծրագրի 5-10-րդ ենթակետերով նախատեսված միջոցառումները կիրականացվեն Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի ֆինանսավորմամբ՝ 577.000.0 հազ. դրամի չափով»:»

6) Հրամանի N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի,

7) Հրամանի N3 հավելվածի 3-րդ կետում լրացնել 9-րդ ենթակետ և շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«9) միջազգային ցուցահանդես կազմակերպող ընկերություն՝ օտարերկրյա պետությունում միջազգային ցուցահանդեսի կազմակերպիչ հանդիսացող ընկերություն»:»

8) Հրամանի N3 հավելվածում լրացնել նոր 15-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

«15. Սույն հրամանի N 2 հավելվածի 1-ին կետի 6-րդ ենթակետում նախատեսված «JCK Show 2025» ոսկերչական իրերի 33-րդ միջազգային ցուցահանդեսը կիրականացվի առնվազն 15 ընկերության մասնակցության դեպքում, ինչպես նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը կնքում է մասնակցության պայմանագիր միջազգային ցուցահանդես կազմակերպող ընկերության հետ՝ միայն տվյալ միջոցառմանը մասնակից ընկերությունների կառուցապատման պայմանագրի և տվյալ պայմանագրով պարտավորությունների մարումը հավաստող փաստաթղթերի՝ վճարման անդորրագրի, առկայության դեպքում, որն իրականացնելուց հետո միայն նախարարությունը պարտավորվում է վճարել միջոցառման տարածքի վարձակալության համար նախատեսված գումարը, որը չի կարող գերազանցել 180 հազար դոլարին համարժեք Հայաստանի Հանրապետության դրամը:»

9) Հրամանի Հավելված N 4 շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 3 հավելվածի

10) Հրամանը լրացնել նոր N 5 հավելվածով՝ համաձայն N 2 հավելվածի

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝ ապահովել սույն հրամանի տեղադրումը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հավելված N 1

Հայաստանի Հանրապետության

էկոնոմիկայի նախարարի

2025 թվականի

_____ __-ի N___-Ա հրամանի

«Հավելված N2

Հայաստանի Հանրապետության

էկոնոմիկայի նախարարի

2025 թվականի

_____ __-ի N___-Ա հրամանի

ՑԱՆԿ

2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՏԱՂԱՎԱՐՈՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

«1. «Продэкспо» 2025 սննդամթերքի և խմիչքների միջազգային ցուցահանդես-փետրվարի 3-ից 7-ը (Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն),

2. «Gulfood 2025» սննդի և ըմպելիքի 30-րդ միջազգային ցուցահանդես-փետրվարի 17-ից 21-ը (Դուբայ, Միացյալ Արաբական Էմիրություններ),

3. «Bee together 2025», թեթև արդյունաբերության ցուցահանդես (գործարար հանդիպումների հարթակ) – մայիս 27-ից 29-ը, (Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն),

4. «JCK Show 2025» ոսկերչական իրերի 33-րդ միջազգային ցուցահանդես -հունիսի 6-ից 9-ը (ԱՄՆ, Լաս Վեգաս),

5. «Ismailovo shoes 2025» կոշիկի և կաշվե իրերի ցուցահանդես – օգոստոսի 11-ից 18-ը (Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն),

6. «Texworld Paris 2025» հագուստի և գործվածքի մատակարարման միջազգային ցուցահանդես-սեպտեմբերի 15-ից 17-ը (Փարիզ, Ֆրանսիայի Հանրապետություն),

7. «Anuga 2025» սննդի և խմիչքների միջազգային ցուցահանդես – հոկտեմբերի 4-ից 8-ը (Քյոլն, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն),

8. «BCB Convent Berlin 2025» գինու և ոգելից խմիչքների միջազգային ցուցահանդես- հոկտեմբերի 6-ից 8-ը (Բեռլին, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն),

9. «CPHI Worldwide 2025» դեղագործական միջազգային ցուցահանդես – հոկտեմբերի 28-ից 30-ը (Ֆրանկֆուրտ, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն),

10. «A+A 2025» աշխատանքի անվտանգության և առողջության պաշտպանության հագուստի միջազգային ցուցահանդես- նոյեմբերի 4-ից 7-ը (Դյուսելդորֆ, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն),

11. Չինաստանի 8-րդ միջազգային ներմուծման միջազգային ցուցահանդես- նոյեմբերի 5-ից 10-ը (Շանհայ, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն),

12. «FHC Shanghai 2025» սննդի միջազգային ցուցահանդես - նոյեմբերի 12-ից 14-ը (Շանհայ, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն)։

13. «AgroPack Iraq 2025» գյուղատնտեսական միջազգային ցուցահանդես-նոյեմբերի 24-ից 27-ը (Էրբիլ, Իրաքի Հանրապետություն),

14. «Food Africa» սննդի և ըմպելիքների միջազգային ցուցահանդես-դեկտեմբերի 9-ից 11-ը (Կահիրե, Եգիպտոսի Արաբական Հանրապետություն)։»:

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
էկոնոմիկայի նախարարի
2025 թվականի
_____ __-ի N___-Ա հրամանի

«Հավելված N 5
Հայաստանի Հանրապետության
էկոնոմիկայի նախարարի
2025 թվականի
փետրվարի 19-ի N629-Ա հրամանի

ՑԱՆԿ

2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐԻ (ՖՈՐՈՒՄՆԵՐԻ), ՇՆՈՐՀԱՆԴԵՄՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

1. «Gulfood 2025» սննդի և ըմպելիքի 30-րդ միջազգային ցուցահանդեսի շրջանակներում գործարար հանդիպումներ-փետրվարի 17-ից 21-ը (Դուբայ, Միացյալ Արաբական Էմիրություններ),
2. Հայաստան Հանրապետության և Վրաստանի միջև գործարար համաժողով -մայիսի 6-ին (Երևան, Հայաստանի Հանրապետություն),
3. Հայաստան Հանրապետության և Ավստրիայի Հանրապետության միջև գործարար համաժողով -մայիսի 14-ից-15-ը (Վիեննա, Ավստրիայի Հանրապետություն),
4. «SPIEF 2025» 28-րդ միջազգային տնտեսական ֆորում-հունիսի 18-21-ը (Սանկտ Պետերբուրգ, Ռուսաստանի Դաշնություն),
5. «Apimondia 2025» մեղվաբուծության ոլորտի 49-րդ գիտաժողով-սեպտեմբեր 23-ից 27-ը (Կոպենհագեն, Դանիայի Թագավորություն),
6. Հայաստանի Հանրապետության և Հնդկաստանի Հանրապետության միջև գործարար համաժողով -հունիսի 5-ից-8-ը (Երևան, Հայաստանի Հանրապետություն),

7. Հայաստանի Հանրապետության և Սլովակիայի Հանրապետության միջև գործարար համաժողով - մայիսի 12-ից-16-ը կամ հունիսի 9-ից 13-ը (Երևան, Հայաստանի Հանրապետություն)»:

Հավելված N 3

Հայաստանի Հանրապետության

էկոնոմիկայի նախարարի

2025 թվականի

_____ __-ի N___-Ա հրամանի

«Հավելված N 4
Հայաստանի Հանրապետության
էկոնոմիկայի նախարարի
2025 թվականի
_____ __ -ի N ___ -Ա հրամանի

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՏԱՂԱՎԱՐՈՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան **«--- --- -------»**

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն), ի դեմս գլխավոր քարտուղար ---------- մի կողմից, և ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն), ի դեմս ----------, (այսուհետ՝ Կողմեր), մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը կազմակերպում է օտարերկրյա պետությունում միջազգային ցուցահանդեսին (այսուհետ՝ Ցուցահանդես) ազգային տաղավարով Ընկերության մասնակցությունը։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1 Պահանջել փոխհատուցում Ցուցահանդեսին Ընկերության մասնակցության ապահովման հետ կապված Նախարարության իրականացրած փաստաթղթերով հիմնավորված ծախսերի 100 տոկոսի չափով, եթե Ընկերությունը՝

ա) չի մասնակցում Ցուցահանդեսին, այդ թվում՝ եթե վերջինս չի մասնակցել Ցուցահանդեսի աշխատանքների բոլոր օրերին կամ զրկվել է Ցուցահանդեսին մասնակցելու հնարավորությունից միջազգային ցուցահանդեսի կազմակերպչի

(այսուհետ՝ Կազմակերպիչ) կողմից սահմանված մասնակցության պայմանները և/կամ կանոնները խախտելու պատճառով:

2.2 Նախարարությունը պարտավոր է՝

2.2.1 Կազմակերպչի հետ վարել բանակցություններ, ընտրել տաղավարը, համաձայնեցնել մասնակցության պայմանները,

2.2.2 Կազմակերպել տաղավարի տարածքի վարձակալության (գրանցման և մասնակցության) (80%), դիզայնի, կառուցապատման, ձևավորման, անհրաժեշտ կահույքի և սարքավորումների վարձակալման համար անհրաժեշտ աշխատանքները,

2.2.3 Ընկերությանը տրամադրել Ցուցահանդեսի անցկացման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություն,

2.2.4 Օժանդակել Ընկերության կողմից նոր գործարար կապերի հաստատմանը,

2.2.5 Ցուցահանդեսի ամբողջ ընթացքում օժանդակել Ընկերության աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը:

2.3 Ընկերությունն իրավունք ունի՝

2.3.1 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ փոխհատուցելով Ցուցահանդեսին Ընկերության մասնակցությունն ապահովելու նպատակով Նախարարության կողմից կատարված փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:

2.4 Ընկերությունը պարտավոր է՝

2.4.1 Իրականացնել իր կողմից կատարվելիք ծախսերը՝ ճանապարհածախս, կացություն, բեռնափոխադրում,

2.4.2 Իրականացնել Կազմակերպչի կողմից սահմանված՝ Ցուցահանդեսին ընկերության գրանցման և մասնակցության, տարածքի վարձակալության պայմանագրով նախատեսված այլ պարտադիր վճարումները (20%) *,

2.4.3 Պահպանել Կազմակերպչի կողմից մասնակցության պայմանագրով սահմանված պայմանները:

2.4.4 Ընկերությունը Ցուցահանդեսի աշխատանքային ժամերին ազգային տաղավարի իրեն հատկացված հատվածում ապահովում է.

ա) մշտապես մեկ ներկայացուցչի առկայություն, որը պետք է տիրապետի առնվազն մեկ օտար լեզվի՝ ապահովելով տվյալ երկրում բանակցություններ վարելու պատշաճ մակարդակ, ինչպես նաև տիրապետի բավարար տեղեկատվության ներկայացվող արտադրանքի վերաբերյալ,

բ) կազմակերպում է իր արտադրանքի համտես՝ ապահովելով անհրաժեշտ սպասքի պարագաներ,

գ) չի իրականացնում տաղավարի ընդհանուր ձևավորումը խախտող պաստառների և այլ ցուցադրությունների տեղադրում:

2.5 Ցուցահանդեսի արդյունավետության գնահատմանը նպաստելու նպատակով ըստ Նախարարության ներկայացրած պահանջի, ընկերությունը պետք է ներկայացնի արդյունավետության գնահատման հաշվետվություն:

2.5.1 Ըստ նշանակության օգտագործում է ցուցահանդեսի համար իրեն հանձնված գույքը և նշված գույքը վնասելու դեպքում համապատասխան չափով փոխհատուցում է Նախարարության կրած վնասները:

2.5.2 Սույն պայմանագրի 2.5.1-ով պատճառված վնասի դեպքերում փոխհատուցում է Նախարարության կատարած ծախսերը: Փոխհատուցումը պետք է իրականացվի Նախարարության կողմից նման պահանջ ներկայացվելու օրվանից սկսած 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

*Սույն կետը կիրառվում է ցուցահանդեսի կազմակերպչի կողմից սահմանված՝ ազգային տաղավարով մասնակցության դեպքում յուրաքանչյուր ընկերության գրանցման, մասնակցության, տարածքի վարձակալության և այլ պարտադիր վճարումների պահանջի դեպքում համաձայն՝ Հրամանի N 1 հավելվածի 7.1. կետում նշված դրույթի

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը:

3.2 Ընկերությունը և Նախարարությունը սույն պայմանագրի շրջանակներում պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ «ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ»

4.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը քննվում են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1 Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Ընկերության և Նախարարության կողմից:

6.2 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

6.3 Ընկերության և Նախարարության վերակազմակերպման դեպքում վերակազմակերպվող կողմի իրավունքները և պարտականությունները փոխանցվում են վերջինիս իրավահաջորդին:

7. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն Իրավաբանական հասցե՝ 0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 փ. ՀՎՀՀ՝ 02698604 Պետական գանձապետական գործառույթների վարչություն Հաշվեհամար՝ 900011010643 Էլեկտրոնային հասցե՝ secretariat@mineconomy.am	Ընկերության անվանում Հասցե՝ ՀՎՀՀ՝ Բանկային տվյալներ՝ Բանկային հաշվեհամար Էլեկտրոնային հասցե
Գլխավոր քարտուղար	**Ընկերության պատասխանատու անձ**
_____	_____
(ստորագրություն, Կ.Տ.)	(ստորագրություն, Կ.Տ.)